



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2159

201
4-75

03 AUG 2009

ՊԵՐ ԶՕՄԲՈՐԵ ՄԷՍԷ

ՊԵՏՐՈՍ Ծ. Վ. ԿՈՍԿԱՆԴԻՆԵԱՆ

ՔԱԳԱՆՈՐԵՍՑԷ ՏԷՐ ՅԱԿԻՏԵԱՆ

**ՄԱԹՈՒՍԱՂԱՅԻ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ**

Սոյն թիւը Արհ. Պետրոս Արք. Գոյունեանին
ծախումը սպունեցաւ :

Կաթողիկէ Տպարան — Պէյրուք
1932

201

4-75

ՄԱԹՈՒՍԵԱՂԱՅԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Մաթուսաղայի հարցումները չսած անոր ով ըլլալը հասկնալ պէտք է: Մաթուսաղայի անձը, կրած անունին հափ հին չէ: Ինքը բարի, լուրջ եւ բաւական ալ զարգացած մարդ մըն է. և հազիւ 35 կամ 40 տարեկան կրնայ ըլլալ:

Մանկութենէն հոգեւոր կեանքի եւ բարեգործութեան համար մեծ հակում ունենալը կը խոստովանի:

« Հոգեւոր կեանքը կեղծաւորող մարդոց ժողովները յաճախեցի, զանոնք քննեցի, բայց անոնց քով գոհացուցիչ, համոզիչ, և խղճմտանքը կատարելապէս հանդարտեցնող բան մը չգտայ » կ'ըսէ:

Մաթուսաղա հոգեւոր խնդիրներու եւ նիւթերու վրայ լսած կարգ մը խօսքերուն եւ տեսած շատ մը բաներուն չկարենալով իմաստ մը տալ, հաստատապէս որոշած է ճշմարտութիւնը փնտռելու: Բայց, Բարդկային նկատումով (մարդիկ ի՞նչ կ'ըսեն ըսելով) Նիկողեմոսի պէս, որուն դէպքը կը կարգանք սուրբ գիրքին մէջ, ճշմարտութիւնը հասկնալու համար գիշերուան ատենը յարմար կը տեսնէ:

— « Մաթուսաղա, մասնաւոր բան մը ունի՞ր ըսելիք »:

Մաթուսաղա. — « Տէ՛ր Հա՛յր, կրօնքի մասին ճշմարտութիւնը փնտռելու պարտաւոր եմ »:

— « Իր դաւանած կրօնքին ճշմարիտ ըլլալուն կամ չըլլալուն վրայ կասկածող մարդը, այո՛ Մաթուսաղա, իրեն կարողութեան համեմատ ճշմարտութիւնը փնտռելու պարտաւոր է: Որովհետեւ « Ոչ թէ ինծի Տէ՛ր, Տէ՛ր ըսողը երկնից արքայութիւնը պիտի մտնէ, այլ այն որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ » կ'ըսէ Սուրբ Գիրքը. (Մատթ. 7, 21):

Տէրն մեր Յիսուս Քրիստոս փրկութեան ճամբուն մէջ մեզի լոյս եւ առաջնորդ ըլլալու համար կարգ մը ճշմարտութիւններ յայտնելով, պատուիրաններ տուաւ: Ուստի մեր ուղածին պէս ապրելով, մեր քմահաճոյքին ծառայելով չէ որ կրնանք մեր փրկութեան գործը գլուխ հանել, այլ Աստուծոյ պատուիրանները կատարելով: Այս պատճառաւ է որ Դաւիթ մարգարէն ալ կ'ըսէ. « Սաստեցեր ամբարտաւանից, անիծեալ ոյք խոտորեցան ՚ի պատուիրանաց քոյ » (Սաղմ. 118, 21): »

Մաթուսաղա. — « Քանի որ իրեն պատկանած կրօնքին վրայ կասկածող մարդ մը ճշմարտութիւնը փնտռելու պարտաւոր է եղեր, կարգ մը խնդիրներու մասին, Տէ՛ր Հայր, ձեզմէ լուսաբանութիւններ պիտի ուզեմ: Եւ այս օրուան հարցումս սա է. »

Ա. ՀԱՐՑՈՒՄ

« Օրհնիք ՚ի ձեռս Առաջնորդաց եմ » խօսքերը ի՞նչպէս պիտի հասկնանք: Այսինքն մեզի պէս մարդ եղող Առաջնորդները (կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ...) օրէնքները, ուղածնին պէս կամ ժամանակի պահանջներուն համեմատ կրնա՞ն փոխել, կամ զանոնք բոլորովին վերցնել »:

— « Օրէնք » ըսելով ի՞նչ կը հասկնաք » :

Մաքուսաղա. — « Տէր Հայր, ես Սուրբ Գիրքէն շատ մը տուններ դոց գիտեմ, բայց քահանաներուն պէս Աստուածաբանութեան գիրքեր կարդացած չեմ : « Օրէնք » բառովը քրիստոնեայ կրօնքին վարդապետութիւնը, անոր պատուիրանները և եօթը խորհուրդները կը հասկնամ, կամ մէկ խօսքով, մեր Առաջնորդներուն կողմանէ մեզի իբր պարտաւորութիւն քարոզեա՞ծ օրէնքները կը հասկնամ » :

— « Այս հարցումին պատասխանը, Մաթուսաղա, շատ պարզ է : Նախ և առաջ սա կէտը լաւ մը ըմբռնելու ենք : Առաջնորդները որ եկեղեցին կը ներկայացնեն, օրէնքները պահելու, պաշտպանելու, քարոզելու և զանոնք ժողովուրդին կատարել տալու համար պաշտօն կը վարեն : Երբ Առաջնորդները իրենց պաշտօնին սահմաններուն մէջ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը մեզի կը սորվեցնեն անոնց մեզի աւանդած ուղղափառ վարդապետութիւնը ընդունելու և կատարելու պարտաւոր ենք, որովհետեւ անոնց սորվեցուցած վարդապետութիւնը իրենցը չէ, այլ Յիսուս Քրիստոսին է :

Այս ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոս անձամբ մեզի կը սորվեցնէ : « Դպիրները և փարիսեցիները Մովսէսին աթոռը նստած են : Ուրեմն ինչ որ ձեզի կ'ընեն որ պահէք, պահեցէք ու ըրէք, բայց անոնց գործերուն պէս մի ընէք... » Մատթ. 23, 2, 3 :

Ուստի Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը աւանդող Առաջնորդներուն, եթէ նոյն իսկ անձնական թերութիւններ ալ ունենան, հնազանդելու ենք վասնզի

անոնց մեզի քարոզած վարդապետութիւնը Քրիստոսինն է :

Նոյնպէս « Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք, մկրտեցէ՛ք զանոնք, յանուն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, սորվեցուցէ՛ք անոնց պահել ամեն ինչ որ պատուիրեցի ձեզի... » Մատթ. 28, 19, 20 :

Բայց երբ որ Առաջնորդները Քրիստոսի ուղղափառ վարդապետութիւնը փոխելով սխալ և տարբեր իմաստներով և մեկնութիւններով զայն մեզի կը սորվեցնեն, նոյն իսկ եթէ հրեշտակ ալ ըլլան, անոնց երբէք հնազանդելու չենք : « Բայց եթէ մենք կամ երկինքէն հրեշտակ մը (գայ) աւետարանէ ձեզի անկէ ուրիշ զոր մենք աւետարանեցինք ձեզի, նզովեալ ըլլայ » . Գաղատ. 1. 8 :

Մաքուսաղա. — « Այս ըսածներդ լաւ հասկցայ, Տէ՛ր Հայր, բայց իմ հարցումս ասոր մասին չէ » :

— « Քիչ մըն ալ համբերէ, Մաթուսաղա, խօսքս լրացնելէ վերջ ձեր չհասկցած կէտերը նորէն կրնաք հարցնել » :

Մաքուսաղա. — « Այն ատեն, Տէ՛ր Հայր, ներողամիտ կ'ըլլաք. շարունակեցէ՛ք, ես մտիկ կ'ընեմ » :

— « Քա՛ւ լիցի, յանցանք ըլլալիք բան մը չկայ : « Օրէնք » ՚ի ձեռս Առաջնորդաց են » ըսելով, երկու տեսակ « օրէնք » զանազանել պէտք է. մէկը աստուածային օրէնք, և միւսը Առաջնորդաց օրէնք, այսինքն եկեղեցւոյ դրած « օրէնք » ները : Այս օրէնքներու զանազանութիւնը, Մաթուսաղա, մտքերնիդ պահելու էք :

Ա. Աստուածային օրէնքները, այսինքն Յիսուս Քրիստոսի մեղի տուած վարդապետութիւնները, անոր սուրբ պատուիրանները, և եօթը խորհուրդները, Առաջնորդները չեն կրնար փոխել, որովհետեւ այսպիսի իշխանութիւն մը իրենց տրուած չէ, որովհետեւ Առաջնորդները Աստուծոյ ճշմարտութիւնները և պատուիրանները սորվեցնելու, անոր սուրբ վարդապետութիւնները քարոզելու, պաշտպանելու համար միայն պաշտօն առած են » :

— Մարութալա. — « Ասիկա հաստատելու համար, Տէ՛ր Հայր, Սուրբ Դիրքէն քանի մը վկայութիւններ կրնա՞ք ցուցնել » :

— « Այս ըսածս հաստատելու համար, Մաթուսաղա, Սուրբ Դիրքէն վկայութիւններ բերելու հարկ չկայ որովհետեւ խելքը, և տրամաբանութիւնը ասիկա բացարձակապէս մեղի կը սորվեցնեն, բայց քանի որ Սուրբ Դիրքէն վկայութիւններ կուղէք (կ՛երեւի ուրիշներուն պատասխանելու համար...) կրնաք հետեւեալ հատուածները կարդալ: Մատթ. 24, 35. « Երկիրք և երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս ընաւ չպիտի անցնին »: Նոյնպէս. Մատթ. 5, 17, 18. « Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարդարէները քակելու, չեկայ քակելու, հապա կատարելու: Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի, մինչև երկիրք ու երկիր անցնին, յովտ մը կամ նշանադիր մը չպիտի անցնի, մինչև բոլորն ալ կատարուին »:

Առաջնորդները անշուշտ, Քրիստոսէն աւելի մեծ չեն որ Աստուծոյ օրէնքը փոխեն կամ բոլորովին վերցնեն: Ուստի իրենց պաշտօնին սահմանէն դուրս Աստուածային օրէնքները փոխելու համարձակութիւն

ունեցող Առաջնորդները Յիսուս Քրիստոսի վերոյիշեալ խօսքերը հերքած կ'ըլլան, հետեւեալ Պօղոս Առաքեալին ըսածին համաձայն անիծեալ կ'ըլլան. Գաղ. 1, 8:

Մարութալա. — « Տէ՛ր Հայր, այս անգամ լաւ հասկցայ: Թէ՛ որ Առաջնորդներուն դրած օրէնքներն ալ բացատրել բարեհաճիք շատ գոհ պիտի ըլլամ »:

— « Առաջնորդներուն դրած օրէնքները, այսինքն եկեղեցւոյ պատուիրանները, այո՛ Առաջնորդներուն ձեռքն են, Առաջնորդները (եկեղեցին) կրնան զանոնք փոխել կամ առժամանակեայ կերպով զանոնք վերցնել »:

Մարութալա. — « Կրնա՞ք, Տէր Հայր, ատիկա օրինակով մը ինծի պարզել »:

— « Այո՛, պահքն ու ծովը եկեղեցւոյ կողմէ որոշուած ապաշխարանքի ձեւ մըն է. արդ եկեղեցին կրնայ փոխել զայն ժամանակի պահանջներուն համաձայն. իւրաքանչիւր անհատի անձնական պէտքերուն ու կարողութեան չափով ուրիշ ապաշխարանքի թեթեւեւեր որոշել. օր. աղօթք, բարեգործութիւն... կրնայ նաեւ բոլորովին վերցնել: Ահա այս իմաստով է որ « օրէնք 'ի ձեռս Առաջնորդաց են » կ'ըսենք »:

Առաջնորդներուն, այսինքն եկեղեցւոյ պատուիրաններն ալ պահելու պարտաւոր ենք. առանց օրինաւոր պատճառի անոնց դէմ զանցառու գտնուողը մահուափ մեղք գործած կ'ըլլայ: « Ան որ ձեզի մօտիկ կ'ընէ ինծի մօտիկ կ'ընէ, և ան որ ձեզ կը մերժէ, զիս կը մերժէ, և ան որ զիս կը մերժէ զիս զրկողը կը մերժէ » (Ղուկ. 10, 16): Նոյնպէս. « Եւ եթէ անոնց ալ մօտիկ չընէ եկեղեցին ըսէ, իսկ եթէ եկեղեցին ալ մօտիկ չընէ հեթանոսի ու մաքսաւորի պէս համարուի քեզի համար » (Մատթ. 18, 17):

Մարութալա. — « Ձեր բացատրութիւններէն, Տէ՛ր Հայր, շատ օգտուեցայ, շատ ուրախ եմ: Երբոր



ժամանակ ունենամ այսպիսի խնդիրներու վրայ ձեզի
ուրիշ հարցումներ ալ պիտի ընեմ » :

— « Ես ալ շատ ուրախ եմ, Մաթուսաղա, որ ձեզի
պէս բարի եւ զարգացած մարդու մը հետ ծանօթացայ,
կը փախաքիմ որ այսպիսի խնդիրներու վրայ միշտ
լուսաբանուիք: Կը յուսամ որ, Մաթուսաղա, Սուրբ
Գիրքին հետեւեալ խօսքերը լաւ մը մտածելով պիտի
գործադրէք » :

« Որպէսզի ալ ասկէ վերջը տղաք չըլլանք, երերած
ու վարդապետութեան ամէն հովերէն ասդին անդին
տարու բերուած մարդոց խաբէութիւնովը, որոնք խո-
րամանկութեամբ կը խաբեն մոլորեցնելու, հապա
սիրով ճշմարտութեան հետեւելով, ամէն բան Անով
աճեցնենք, որ գլուխ է, այսինքն Քրիստոս » (Եփես.
4, 14) :

ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

« Օրէնք 'ի ձեռս Առաջնորդաց են » :

Ա. Աստուծոյ զրած օրէնքները Առաջնորդները
չեն կրնար փոխել :

Բ. Առաջնորդները (եկեղեցին) իրենց զրած
օրէնքները կրնան ժամանակին պահանջներուն համե-
մատ փոփոխել :

« Յիսուս Քրիստոս նոյն է երէկ ու այսօր եւ
յաւիտեանս » (Եբրայ. 13, 8) :

Տպագրեցի

17 Հոկտեմբեր 1932

† ԹՈՎՀ. ԱՐՔ. ՆԱԶԼԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԺԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

